

ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES)
ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԴԻՄՈՐԴ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ՝ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԱՆԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2-Դ ԿԱՐԳԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԼՈՒՐՁ/ՎԱՅՐԱԳ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ,
ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ, ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆԴԵՊ) [ԲԱՐԵՎԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍ 12305.87]

(ADDRESSEE)

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____

Դիմորդ մատակարարողի անունը՝ _____

Ստացողի անունը _____

Ստացողի գործի համարը՝ _____

IHSS գրասենյակի հասցեն՝ _____

IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Տնային աջակցության ծառայությունների (IHSS) դիմորդ մատակարարողին

Վարչաշրջանը/հանրային իշխանությունը/շահույթ չհետապնդող կոնսորցիումը մերժել է ձեր իրավասությունը IHSS մատակարարող լինելու համար կամ ծառայություններ տրամադրելու դիմաց IHSS ծրագրից վճարումներ ստանալու համար:

Որպես մատակարարողի անդամագրման գործընթացի մաս՝ դուք մատնահետքեր եք հանձնել Կալիֆոռնիայի Արդարադատության բաժնին՝ քրեական կենսագրությունը ստուգելու համար: Կենսագրության ստուգումը կամ դատարանի փաստաթուղթը ցույց տվեցին, որ դուք դատապարտված եք եղել այնպիսի հանցագործության(ների) համար, որը ձեզ զրկում է IHSS մատակարարող լինելու ու ծառայություններ տրամադրելու համար IHSS ծրագրից վճարումներ ստանալու իրավասությունից՝ հիմնվելով Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի մաս 12305.87-ի վրա: Այս հանցագործություն(ներ)ը, որը/որոնք որակագրկել է/են ձեզ, թվակված է/են ներքևում՝

Ստացողին նույնպես ծանուցում է ուղարկվել՝ տեղեկացնելով նրան, որ դուք դատապարտված եք եղել այնպիսի հանցագործության համար, որը ձեզ զրկում է IHSS մատակարարող լինելու իրավասությունից: Ստացողը տեղեկացվել է, որ այս դատապարտման մասին տվյալները շատ զգայուն բնույթի են և պետք է գաղտնի պահվեն: Ստացողին օրենքով արգելվում է կիսել այս տեղեկության որևէ մաս մեկ այլ անձի կամ հաստատության հետ:

Եթե դուք համաձայն չեք այս վճռի հետ, կցված SOC 856 ձևը՝ «Մատակարարողի անդամագրման մերժման բողոքարկման հայց», բացատրում է՝ ինչպես կարող եք բողոքարկել: Բողոքարկման ձեր գրավոր խնդրանքը պետք է ստացվի այս նամակի ամսաթվից վաթսուն (60) օրացուցային օրվա ընթացքում:

Եթե կարծում եք, որ Կալիֆորնիայի Արդարադատության բաժնի տրամադրած տեղեկությունը սխալ է, դուք պետք է դիմեք Կալիֆորնիայի Արդարադատության բաժնի Արձանագրությունների վերանայման միավոր՝ (916) 227-3849 հեռախոսահամարով, որպեսզի ուղղեք ձեր քրեական կենսագրության ստուգման սվյալները:

Չնայած որ դուք դատապարտվել եք 1-ին էջում նշված հանցագործության(ների) համար, IHSS ստացողը կարող է վարչաշրջանին ներկայացնել լրացված SOC 862 ձևը՝ «IHSS Ստացողի հայցը մատակարարողի հրաժարման համար», որը ձեզ թույլ կտա աշխատել որպես IHSS մատակարարող ու վճարումներ ստանալ IHSS ծրագրից ծառայություններ տրամադրելու համար միայն այդ ստացողին և միայն այն վարչաշրջանում, որտեղ ներկայացվել է SOC 862-ը:

Դուք կարող եք նաև դիմել ընդհանուր բացառության համար, որը ձեզ թույլ կտա աշխատել որպես IHSS մատակարարող մի քանի ստացողների համար ու վճարում ստանալ IHSS ծրագրից: Խնդրում ենք կարդալ կցված SOC 863 ձևը՝ «IHSS Դիմորդ մատակարարողի ընդհանուր բացառության հայց», որպեսզի իմանաք, թե ինչպես կարող եք ընդհանուր բացառություն խնդրել և ինչպես լրացնել ընդհանուր բացառության ձևը:

Եթե որևէ հարցեր ունեք այս նամակի վերաբերյալ, կարող եք զանգահարել IHSS գրասենյակ նախորդ էջի վերևում նշված հեռախոսահամարով: